այգին որ 'ի փարբի է 'ի վանացս 'ի հիւրատունս եւ նոքա հա-տուց ինձ պատարագ 'ի տարին աւր • • •

կամաւն ա̃յ ես քոթիթ ծոնս եւ կենակից իմ շահմամս տուաք զուխ դանկն իւր հողոմն եւ ջրոմն ոնց բնական լեալ է 'ի սբ յովաննէս եւ ե • • • շինած տներս 'ի սբ յովաննէս եւ սպասաւորք սորա հատուցին մեզ 'ի տարին Ղ պատարագ մին ինձ քոթթին Ը շահմամին մին վարդանա Ը սար էթէ ոք 'ի մերոց կամ յաւտարաց զգիրս մեր խափանէ ելցէ 'ի կենացն ա̃յ կատարիչքն աւրհնին 'ի քէ̃ •

ես իգնատիոս որդի աքեղին եւ կենակից իմ մամեր տուաք զմեր հայրենիք կէս դանկն 'ի մարաց մարգի 'ի սբ յովաննէս եւ սոքա ետուն մեզ պատարագ 'ի տարին Ը աւր • ա̃ • ինձ և • ա̃ • մամերոյն թէ 'ի մերոյ կամ այլ ոք զգիրս մեր խա-փանէ նզովի յա̃յ •*

Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Ցարեաւ. զիա՛րդ ի մահուանէն
Ի բաց աւար իւր կապտեցաւ.
Ո՛րպէս յաղթեաց նա դրանց նըսեմ.
Ի՞բր եւ այսրէն ազատ անցաւ,
Ա.յն որ ընդ բռամբ եկաց այլում.
Ես ի յանուն նորին երգնում
Որ զնա կանգնեացն ի մահուանէ։
Ցարեաւ. արդ գլուխ իւր սըրբանուէր
Ի վարշամակն այլ ոչ հանգչի.
Ցարեաւ. ի կողմն անդ աւընթեր.
Գերեզմանին մենաւորի
Կայ կափարիչըն թաւալեալ.

* Զայլս յարձանագրաց գտցեն սիրողք յառանձինն տպագրութեան մատենիս, զի ոչ կամեցաք աստանօր ծանրանալ օրագրիս։

Իբր ոք հըզօր հըսկայ արբեալ
Տէրըն զարթեաւ ի նիրհմանէ ։
Որպէս ի կէս ճանապարհին ,
Յանտառ մայրեացն՝ ընդոստ ի քնոյն
Ուշաբերեալ անցաւորին ,
Ցընցեալ թափէ առ ի գըլխոյն
Ըզդօսացեալ տերեւ խամուր ,
Որոյ թողեալ զոստ իւր թափուր ,
Յամր յամր յուշիկ եկաց անդէն .
Սապէս զանշարժ վէմն ահագին
Որ կայր զփորեալ տապանաւ մած ,
Մերժեաց բազուկ քաջազօրին ,
Յորժամ հոգին յանդրէն իւր դարձ
Ի նսեմ հովտէն դըժուարավայր ,
Աստուածայնոյն՝ որ լըռեալ կայր ,
Արի՛ , ասէր , ես ընդ քեզ եմ ։
Ո՛ր այն բարբառ սըփռեալ տարած
Ընդ հանգուցեալսն , որ յիսրայէլ ·
Տէր ըզդըրունսն ահա եբաց .
Տէր եւ աստուածն Էմմանուէլ ։
Որ նըստէիքդ ի խաւարի ,
Ոչ եւս իցէք այլ վտարանդի .
Ինքն ահա ձեզ կենագործող ։
Քան զինքն յառաջ ի կայս տեւողս
Ո՛վ ամբարձաւ ոք անդր ի վեր ։
Ի կոչել զձեզ՝ ի լուռ դըժոխս ,
Ո՛ նախահարքդ , էջ վայրաբեր .
Ի հին անդ դարսըն ցանկալին ,
Եւ Թըշնամւոյն սարսափելին
Եւ խոստացեալն առ մեզ յաղթող ։
Զարմանահրաշ տեսանողաց ,
Որ զհանդերձեալսըն պատմեցին ,
Իբր հայր իւրոց մտադիր որդեաց
Պատմէ զեղեալսն որ վաղ անցին ,
Ցուցաւ արփին այն գերանճառ ,
Որ ի նոցուն խօսեալ բարբառ ,
Երդումն յերկիր երդուաւ Աստուած ,

Մինչ Եսայի եւ Անդէէ
Հաստատեցին առ ընդհանուրս
Թէ անձկացեալն օր մի գայցէ.
Մինչ ի խորհուրդսըն խորասոյզ,
Զկարգեալ աւուրցն ընթերցաւ շար,
Եւ զթիւ ամաց դեռ աննրկար
Ցիւր Դանիէլ ի միտս յիշեաց։
Այդ ծաւալէր, եւ լալագին
Մադդաղենեանն եւ այլ կանայք
Ցողբս ըզմեռեալն աշխարէին,
Եւ Սիոնի ահա կատարք
Ողջ սարսեցին ահագնադղրդ,
Եւ պահապանքըն նախատորդ
Որպէս մեռեալս անկան յահէն։
Նորանըշան անդ պատանեակ
Վերանըստաւ ի տապանին.
Տեսիլ դիմացն իբրեւ զփայլակ,
Սպիտակ հանդերձքն որպէս ըզձիւն.
Տըրտմեցելոյն որ հարցանէր
Պատասխանի տայր քաղցր ի սէր.
Ահա յարեաւ. նա չէ աստէն։
Ի բաց քօղովքըն խըրթնացեալ
Մանիշակին շուք տրխրերանգ.
Ոսկւոյն մըթար դարձցի ի փայլ.
Օ՛ն քահանայդ, ի ձորձ ճերմակ
Ե՛լ ի պաշտօն մեծ խորհրդոց,
Զի 'նդ լոյս ջահից լամբարաբոց
Ըզյարուցեալըն պատմեսցես։
Ի խորանէն բարբառ լինէր.
Զբարճացիր, դըշխոյ երկնի.
Խընդա՛. Աստուածն՝ ո՞ւմ տուն եղեր,
Զի ըզծածկոյթ մեր ըզգեցցի,
Ահա յարեաւ, որպէս ասաց.
Լեր մեզ միջնորդ. ըստ պատգամաց՝
Լիցին հայցուածք քո իբր օրէնս։
Եղբա՛ղք, աւուրս այս սուրբ հանդէս
Լինի քարոզ սոսկ խընդութեան.

Երախանաց է օրս այս մեզ․
Այսօր խայտայ անձն ամենայն․
Չէ մայր որ ոչ յօժարակամ
Ի նոխ հանդերձսըն տօնական
Ըզմանկըտեակն ըզգեցուցէ ։
Անշուք լեցի փարթամին հաց․
Ի բնաւ ելցեն սեղանոց տուրք․
Եւ զեղջեալ գանձն ի պերճանաց
Խրախճանութեանցըն մեծաշուք ,
Գայցէ յորդոր ի հիւղ ցածուն ,
Եւ զաղքատին ճաշ սեղանոյն
Բերկրեալ առատ զուարթացուցէ ։
Ի բաց դըղորդն եւ ձայն գոչման
Կայթից պարուցըն լըրբենի․
Ոչ այդ հըրճուանք են խընդութեան
Իւ արդարոյն ցընծայ հոգի․
Այլ ի պերճանսն հանդարտ համակ
Եւ երկնային , զերդ նըշանակ
Ուրախութեանն հանդերձելոյ ։
Ո՛հ երանի , ոյց գեղապանծ
Արփին աւուրց սըրբոց գայ վառ․
Իսկ զի՞նչ լեցի որ դիմադարձ՝
Տարաւ ընդ խօլ ըզքայլ մոլար
Ընդ ճանապարհ մահահրաւէր ։
Որ հաստատէ ըզյոյսն ի Տէր ,
Ինքն յարիցէ ընդ Աստուծոյ ։

ԹԱՐԳՄ. Հ. ՍԱՄ. ԿԱՅՍԵՐԵԱՆ

Ա. ՄԱՆՑՈՆԻ

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ